

Հարկ է նշել, որ Հայաստանի ցուցանիշը համեմատաբար բարձր է ոչ պաշտոնական հատվածի, անկանոն հարկային վճարումների և բիզնեսի իրականացման համար վճարվող կոռուպցիոն կաշառքների ծավալի վերաբերյալ հարցերի համար: Սա հատկապես ճիշտ է, եթե համեմատում ենք երկրի մրցակցային շուկաների համեմատաբար ցածր դասակարգման հետ:

Դատելով աղյուսակ 1-ի արդյունքներից¹ Հայաստանը կարող է արդյունավետ լինել իր կոռուպցիայի և ոչ պաշտոնական հատվածի վերահսկողության հարցում՝ համեմատած ԱՊՀ այլ երկրների հետ, բեպետ դեռևս ցածր է հետազոտության մեջ ընդգրկված բոլոր երկրների միջինից:

Հարկ է նշել, սակայն, որ հարկերի մասին հարցը վերաբերում էր մասնավորապես «տարեկան հարկային վճարումների հետ կապված չգրանցված լրացուցիչ վճարներին կամ կաշառքներին» և չէր դիտարկում անբարեխիղճ մրցակցային առավելություններ ստեղծող անհավասար հարկային վճարումները:

Շուկայական տնտեսության և մրցակցության քաղաքականության կատարելագործման հեմանիշները հիմնվում են.

- բաց շուկաների և արդար առևտրի ապահովման,
- անկողմնակալ և թափանցիկ կերպով օրենսդրության կիրարկմամբ,
- ԱՀԿ կոմիտեների և սկզբունքների կիրառման ապահովմամբ,
- Շուկայի վրա ներգործելու կարողությամբ՝ կառավարական օղակներից ենթակառույցի աստիճանական անկախությամբ,
- ապրանքների և ծառայությունների արտադրության և բաշխման որակի բարելավմամբ,
- Հայաստանի տնտեսության ներքին կարիքներով:

ԲԵՆԻԱՄԻՆ ԵՂԻԱՋԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի թեմատիկ խմբի ղեկավար, տ.գ.դ, պրոֆեսոր

ԱՐԱ ԳՅՈՒՐՋՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.բ.

ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԳԻՏԱԿՑՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՊԱՅՄԱՆ ԵՎ ԲԱՂԱԴՐԻՉ: ԳԻՏԵԼԻՔԱՅԵՆԷ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բնության կողմից մարդուն շնորհված մտածելու կարողությունը կիրառելու պարադիգմի պահանջները՝ այդ գործունեությունը նպատակային, արդյունավետ և գիտելիքի հիմքի վրա իրագործելու պայմաններն իրենց մեջ արդեն իսկ պարունակում են այդպիսի գործունեությունը կառավարելու պահանջը: Եվ իսկապես, եթե մարդկային ցանկացած գործունեություն, անհատի կամ դրանց խմբի կողմից իրականացվող նույնիսկ առանձին գործողությունն պետք է որոշակի նպատակային ուղղվածություն և կոնկրետ նպատակադրում ունենա, իսկ դրանք բազմազան ու բազմաթիվ կարող են լինել, ապա առաջանում է այդ ուղղվածության և նպատակադրումների հնարավոր բազմություններից դրանց ընտրության և հիմնավորման խնդիր, ինչն իր բովանդակությամբ կառավարման գործառույթ է: Այն կատարելիս հաշվի են առնվելու դիտարկվող խնդրի բոլոր կողմերը, ազդող գործոնները և առկա պայմանները:

Նույն տրամաբանությամբ գիտակից կարող է համարվել դրված նպատակին հասնելու այնպիսի ուղու և միջոցառումների ընտրությունը կամ մշակումը, որոնք ի վիճակի կլինեն ապահովել այդ նպատակադրման իրագործումը առավել արդյունավետ տարբերակով: Զանի որ հնարավոր ուղիներն ու միջոցառումները խիստ տարբեր կարող են լինել, ապա այստեղ ևս առաջանում է դրանց ընտրության, մանրամասն ծրագրավորման ու նախագծման, ինչպես և իրագործմանն առնչվող բազմաթիվ այլ գործողությունների բարձր որակով կատարում, որոնք ևս կառավարման գործառույթներ են: Ընդ որում, այս բոլորը կատարվելու է գիտելիքների հիման վրա՝ գիտելիքներն ու փորձը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև մշակելով այդպիսիք՝ անպայմանորեն հիմնավորելով դրանց համարժեքությունը դիտարկվող խնդրի պայմաններին: Իսկ որպեսզի ունենալ պահանջվող գիտելիքը, այն տեղին կիրառել և ճիշտ օգտագործել, նույնպես անհրաժեշտ է ուղղակիորեն կամ խորհրդատվության ձևով ուղղորդել կամ կառավարել այդ գործընթացները:

Այսպիսով, գիտակցված գործունեության գործընթացներում մեծապես կարևորվում է կառավարման դերը: Կառավարող մարմնի կողմից մշակվող կամ առաջադրվող լուծումների հիմնավորվածության մակարդակից և իրականացման որակից զգալի կախվածության մեջ կլինի մարդկային գործունեության կարևորագույն բնութագրի՝ գիտակցվածության աստիճանը: Դրանով իսկ կառավարումը ոչ միայն մարդկային գործունեությունը գիտակցված դարձնելու անհրաժեշտ պայման է, այլ և դառնում է այդ գործունեության կարևոր բաղադրիչ տարրը: Հետևաբար, կարող ենք եզրահանգել, որ մարդկության գլոբալ նպատակների՝ գոյատևման և զարգացման իրագործումը ապահովող մարդկային գիտակցված գործունեության հիմնարար պայմաններն ու տարրերն են նպատակայնությունը, բարձր արդյունավետությունը և գիտելիքահենք ու կառավարելի լինելու

¹ Bearing Point. Հայաստանյան ներկայացուցչություն, IRIS.

հանգամանքը: Դրանց ապահովման աստիճանը պայմանավորում է մաս մարդկային գործունեության գիտակցվածության մակարդակը և դրա միջոցով ազդում մարդկության զլորալ նպատակների իրագործման ինտենսիվության և չափի վրա:

Մարդկային ցանկացած հանրության համար գիտակցված գործունեության և դրա տարրերի բացառիկ կարևորությունը պահանջում է վերջինի լիարժեք գիտակցում հասարակության և կառավարման տարրեր մակարդակների մարմիններում, նշված տարրերի գիտագործնական բարձր մշակվածությունը, զարգացմանը, ինչպես նաև դրանց նպատակային գործունեության համար պահանջվող պայմանների ու բարձր արդյունավետության ապահովմանն այդ մարմինների կողմից աղեկվառ դարձվող ուղղություն: Այս պահանջները, կարծում ենք, նպատակահարմար կլինի ձևավորել օրենսդրորեն: Հնարավոր է նաև դրանք ներառել այդ նպատակին ծառայող պետական հայեցակարգի կամ ռազմավարական ծրագրի կազմում՝ ընդունելով դրանք որպես պաշտոնական կամ օրենսդրաիրավական նորմատիվ փաստաթուղթ, իրականացման հսկողությունը հանձնարարելով գործադիր իշխանության մարմիններին:

Կառավարումը գործունեության համընդհանուր ոլորտ է: Դրա կիրառումը և դրանով իսկ ակտիվ մասնակցությունը իրականացվող գործունեություններում անհրաժեշտություն է ցանկացած ոլորտում, ամենուրեք, ամեն ինչում, ժամանակի ցանկացած հատվածում, յուրաքանչյուր գործողությունում, գործունեությունում իրականացնող սուբյեկտների ցանկացած կարգավիճակի դեպքում, հնարավոր բոլոր պայմաններում: Այն անհրաժեշտ է ինչպես սեփական նախաձեռնությամբ իրականացվող, այնպես էլ այլ սուբյեկտների կողմից պատվիրվող կամ թելադրվող, ինչպես նաև արտաքին պայմանների և ուժերի կողմից պարտադրվող գործողություններում: Եթե վերջինները պայմանավորված են բնության կողմից կամ արտաքին չճանաչված ուժերի միջամտությամբ, ապա կառավարումն այս դեպքում ուղղված է հասարակությանը վնասող երևույթների բացասական ազդեցությունների կանխատեսմանը, կանխարգելմանը կամ նվազեցմանը, սակայն, միևնույն է, նաև այս դեպքերում այն անհրաժեշտություն է:

Ուղղակի կառավարումը կարող է իրականացվել անմիջականորեն գործունեության սուբյեկտի կողմից, ինչպես և այլ սուբյեկտների մասնակցությամբ կամ միայն նրանց կողմից, ընդ որում, ինչպես գործողության սուբյեկտի իմացությամբ, մասնակցությամբ կամ հանձնարարությամբ, այնպես և այն դեպքերում, երբ գործունեության սուբյեկտը կառավարման գիտակից կամ մույնիսկ անգիտակից օբյեկտ է հանդիսանում: Այս վերջին դեպքում կառավարումն իրականացվում է նրա նկատմամբ, նրա շահերի պաշտպանության, վտանգներից զերծ պահելու կամ այլ պատճառներով, եթե այդ օբյեկտը իրավասու կամ ի գործու չէ կառավարման այդ գործառնություններն ինքնուրույն կատարել: Սակայն թվարկած բոլոր դեպքերում, որոնց կազմը, կարծում ենք, կարելի է ընդլայնել, կառավարումն իրականացվելու է գործունեության կոնկրետ նպատակի, դրա իրագործման համար անհրաժեշտ ռեսուրսների առկայության, կիրառվող գիտելիքի, այլ պայմանների և տվյալ դեպքի առանձնահատկությունների հաշվառումով՝ կառավարող սուբյեկտի կարողության սահմաններում: Այս հանգամանքն ավելի է սրում բարձրորակ կառավարում իրականացնելու խնդիրը, քանի որ թվարկած պայմանները խիստ բազմազան են և կիրառման համար դրանցից ընտրության հիմնավորվածությունը կարող է պայմանավորել նաև դիտարկվող խնդրի լուծման, հետևաբար և կառավարվող գործունեության, արդյունավետության մակարդակը, որոշակի ազդեցություն ունենալ դրանց վրա:

Մյուս կողմից, անհրաժեշտ են դառնում կոնկրետ դեպքերում այս պայմանների ոչ միայն մանրամասն հետազոտությունն ու գնահատումը, այլ նաև դրանցում նպատակաուղղված փոփոխություններ կատարելու հնարավորությունների բացահայտումը, միջոցառումների մշակումը, դրանք իրականացնելու նպատակահարմարության և արդյունավետության որոշումը, շատ հաճախ նաև գործընթացների հսկողությունը: Համապատասխան ձևով և չափով ավելանում են գիտակցված գործունեության կառավարման ուղղությունները և դրանց իրացմանն ուղղված գործառնությունները: Վերջիններիս կատարման անհրաժեշտությունը կամ նպատակահարմարությունը կախված է թվարկած պայմանների փաստացի վիճակից և առանձնահատկություններից, ինչպես նաև այն ազդեցությունից, որ դրանք կարող են ունենալ կառավարման խնդիրների լուծման կամ ընդունվող կառավարչական որոշումների վրա:

Գործոնների և դրանց միջև կախվածությունների այսպիսի բազմազանության պայմաններում բարձրորակ կառավարումը իրողություն կարող է դառնալ, եթե առկա է լայն ու սպառիչ տեղեկատվություն կառավարվող օբյեկտի և թվարկած գործոնների ու առանձնահատկությունների վերաբերյալ, հայտնի են դրանց հիմքում ընկած պատճառներն ու դրանք կարգավորելու ուղիները, մշակված են կառավարման՝ այդ պայմաններին համապատասխանող առաջնակարգ տեխնոլոգիաներ, կառավարող մասնագետները քաջատեղյակ են իրենց պարտականություններին և պահանջվող կարողություն ու մոտիվացիա ունեն գիտելիքի պաշարը տեղին և ճշտությամբ կիրառելու՝ կառավարման իրենց գործառնություններն իրականացնելիս: Եթե կան այս նախադրյալները, ապա *այդպիսի կառավարումը կարելի է անվանել գիտելիքահենք:*

Կախված թվարկած բնութագրերի փաստացի մակարդակից՝ տարբեր կլինի նաև գործունեության կառավարման գիտելիքահենքության մակարդակը: Այն բարձրացնելուն ուղղված միջոցառումներ մշակելիս, հասկանալի է, կարևոր է այդ մակարդակի ճշգրիտ գնահատումը: Սակայն խնդրի նորության և մի շարք գիտագործնական դժվարությունների պատճառով այդ նպատակի համար ճշգրիտ մեթոդներ, առավել ևս մակարդակի համալիր (ամփոփ, ամբողջական) գնահատման համար դեռևս մշակված չեն: Մյուս կողմից, գիտելիքահենքության մակարդակի բնութագիրը գիտենալը, հետևաբար և դրա գնահատման համար մեթոդների գոյությունը, գիտելիքահենք հասարակություն կառուցելու այժմյան պայմաններում մեծ կարևորություն ունի երկրի մրցունակությունը միջազգային շուկայում պահպանելու և բարձրացնելու տեսանկյունից: Ուստի անհրաժեշտ ու հրատապ է նաև այդ նպատակին ծառայող համապատասխան հետազոտությունների իրականացումը:

Գիտակցված գործունեության կառավարման համակարգը ձևավորելու, համապատասխան մարմինների ստեղծումը հիմնավորելու, դրանց գործունեությունը կանոնակարգելու և այն իրականացնելու պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ է նախապես պարզորոշել կառավարման գործառույթների կազմն ու բովանդակությունը: Այս պահանջն առավել ևս կարևորվում է գիտելիքի հասարակության և դրան անցման այժմյան ժամանակաշրջանում, երբ կառավարչական յուրաքանչյուր գործառույթ և դրա իրականացմանն ուղղված ամեն մի գործողություն գիտակցված և գիտելիքահենք պետք է լինի: Կառավարող անձնակազմի անդամները պարզորոշորեն պետք է պատկերացնեն իրենց կողմից իրականացվելիք միանշանակ և հստակ ձևակերպված յուրաքանչյուր գործառույթ:

Մյուս կողմից, կառավարումը լինելով գործունեության ընդհանրական ոլորտ՝ ուղղորդելու է ցանկացած գիտակցված գործունեություն կամ գործողություն: Սակայն դրանք, որպես կառավարման օբյեկտ, բազմապիսի և բազմաթիվ են՝ յուրաքանչյուրն իր առանձնահատկություններով և իրագործման պայմաններով: Կառավարման գործառույթների կազմը, դրանց կատարման գործընթացների բովանդակությունը մեծապես կախված են տնտեսության հիերարխիայի համակարգում տվյալ կառավարվող գործունեության ուղղվածությունից, գրաված դիրքից, բնույթից և մասշտաբից, նպատակադրումներից, օգտագործվող տեխնոլոգիաներից և այլ գործոններից, որոնք խիստ տարբեր կարող են լինել: Ուստի տարբեր դեպքերի համար, հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները, ձևավորվելու են կառավարման գործառույթների համապատասխան ցանկեր, որոնք կարող են տարբեր լինել նույնիսկ նույնանման նպատակների իրագործման համար: Նկատի ունենալով կառավարվող օբյեկտների բազմազանությունը և տեսակների մեծ թիվը, հասկանալի է, որ այդպիսի ցանկերը տեսականորեն շատ մեծ թիվ կկազմեն: Ուստի հնարավոր բոլոր դեպքերի համար այդ ցանկերի ամբողջական համակարգի ձևավորումը գործնականորեն իրատեսական համարել չի կարելի:

Իհարկե, կարելի է օգտագործել կառավարման գործառույթների ընդհանրական ձևակերպումներ կամ ձևավորել խոշորացված (ագրեգատ) գործառույթների ցանկ, որոնք կարող են կիրառվել կառավարման տարատեսակ օբյեկտներում կամ դրանց որոշակի խմբերում: Սակայն դրանցում ներառված գործառույթները բավարար հստակություն և կոնկրետություն չեն ունենա ինչպես դրանք կատարողների համար՝ իրենց պարտականությունները պահանջներին համապատասխան կատարելու և արդյունքների համար պատասխանատու լինելու, այնպես և այդ կատարման ընթացքը, ընդգրկումը, որակը և գիտելիքահենքության աստիճանը ստուգողների համար այն գնահատելիս:

Նույն պատճառներով գործնականորեն իրատեսական և օգտակար չի կարելի համարել նաև գործառույթների այնպիսի մեկ ընդհանրական ցանկի կազմումը, որում բավարար մանրամասնությամբ ներառված լինեին տարբեր դեպքերի համար կիրառելի կառավարման գործառույթների ամբողջական համալիրը:

Կառավարման գործառույթների կազմի նշված՝ ընդհանրական և կոնկրետ պայմաններով գործունեությունների համար տարբերակների դրական և բացասական կողմերը հազիվ թե իմաստ ունի այստեղ թվարկելը, քանի որ դրանք վերը տրված բացատրություններից պարզ երևում են: Դրանց տրամաբանական վերլուծությունը և փորձագիտական գնահատումը ձևավորման և կիրառման տեսանկյուններից ցույց է տալիս, որ դրանցից միայն որևէ մեկի ընտրությունն ու հանձնարարումը գործնականում կիրառելու համար հազիվ թե հիմնավորված կլինի: Այդ վերլուծության արդյունքները նաև համոզում են, որ ավելի ընդունելի և օգտակար կարելի է համարել կառավարման գործառույթների ընդհանրական ցանկի ձևավորումը՝ այն հիմք դարձնելով յուրաքանչյուր կոնկրետ դեպքի, գործառույթների իր ցանկը կազմելու համար, եթե այդպիսի անհրաժեշտություն գործնականում առկա է: Ընդ որում, այս առաջարկության համար ելակետ է հանդիսանում այն ենթադրությունը, որ ընդհանրական ձևակերպում ունեցող գործառույթները տարբեր ոլորտներում ստանում են իրենց կոնկրետ արտահայտությունները, որոնց հիման վրա աշխատանքային և ժամանակային ռեսուրսների ավելի փոքր ծախսումներով կարելի կլինի առանձին ոլորտի կամ ճյուղի համար ձևավորել կառավարման գործառույթների իր ցանկը: Դրանում նպատակահարմար կլինի նշել նաև կոնկրետ գործառույթների համար հիմք ծառայած ընդհանրական ձևակերպումները, որոնք կօգնեն ավելի ճիշտ ընկալել տվյալ գործառույթի նպատակային ուղղվածությունը:

Գործունեության գիտելիքահենք կառավարման գործառույթների ցանկի ձևավորման առաջարկվող այս մոտեցումը իրագործելու համար պետք է խուսափել ընդհանրական ցանկում գործառույթների չափից ավելի խոշորացումից, ձևավորել դրանք որոշակի մանրամասնությամբ, ինչպես նաև այնպիսի մեկնաբանություններով, որոնք կնպաստեն գործառույթների բովանդակությունն ավելի ընկալելի դարձնելուն, ապա և կոնկրետ դեպքերի առանձնահատկություններին համապատասխան տեսք տալուն: Հակառակ դեպքում ընդհանրական ցանկը հազիվ թե կարողանա հիմք դառնալ գիտելիքահենք կառավարման գործառույթների մանրամասնացված ցանկեր կազմելու համար:

Կառավարման գործառույթների ընդհանրական ցանկը, կարծում ենք, կարող է ձևավորվել ծավալում գիտագործնական հետազոտության արդյունքում: Ստորև կաշխատենք որոշ մանրամասնացված ձևակերպել և հակիրճ ներկայացնել միայն այն, մեր կարծիքով, հիմնարար դրույթները, որոնք կարող են նպաստել այդպիսի հետազոտության իրականացմանը և առաջարկված ընդհանրական ցանկի ձևավորմանը: Նշենք, որ դրանցում աշխատել ենք հաշվի առնել կառավարման գիտելիքահենքությանը ներկայացվող այժմյան պահանջները՝ մեր պատկերացումներով:

1. Ցանկում ներառվելու են միայն այնպիսի գործառույթներ, որոնք իրենց էությամբ վերաբերում են կառավարման ոլորտին, ծառայում սպասարկվող ոլորտում գործողությունները բարձր որակով կատարելու նպատակին: Դրանց կազմում, հնարավոր է, որ լինեն նաև այնպիսի գործառույթներ, որոնք աշխատանքի բաժանման արդյունքում հայտնվել են գործունեության մի այլ ոլորտում կամ գտնվում են կառավարման և որևէ այլ ոլորտի կցվանքում: Սակայն դրանով այդ գործառույթները չեն դադարում կառավարչական լինել կամ

այդպիսին համարվել: Ուստի նպատակահարմար ենք համարում դրանք ներառել հենց կառավարման գործառնությունների կազմում:

2. Կառավարումն իր էությունը, փաստորեն, մի ամբողջական բարդ գործառնություն է: Այն որպես համակարգ՝ ներկայացնում է իր բաղադրիչ տարրերի միավորումը: Այդ համակարգի հիերարխիայի յուրաքանչյուր մակարդակում ներկայացված են վերադաս մակարդակի գործառնությունների բաղադրիչ տարրերը, որոնք հաջորդ մակարդակում տրոհվում են իրենց բաղկացուցիչ տարրերի: Դրանցից յուրաքանչյուրը, լինելով գործառնության մի մաս, համակարգի ենթահամակարգ, ծառայում է վերադաս մակարդակի գործառնության իրագործմանը:

Կառավարման համակարգի վերին մակարդակի ամբողջական (միավորված) գործառնության (իմա՝ կառավարման) այսպիսի աստիճանական և հաջորդական կառուցվածքավորման արդյունքում առանձնացվում են կոնկրետ բովանդակություն ու արտահայտություն (ներառած անվանումը) ունեցող գործառնություններ: Դրանք, ունենալով նման ուղղվածություն, իրարից տարբերվում են խոշորացման (կամ մանրամասնեցման), հետևաբար և կոնկրետության աստիճանով: Կոնկրետացումը հիմնականում կատարվում է գործունեության ճյուղերի առանձնահատկություններին համապատասխանությունը ապահովելու նպատակով:

Գործառնությունների համակարգի այսպիսի հիերարխիկ նկարագիրը, փաստորեն, ներկայացնում է կառավարման գործառնությունների աստիճանական մանրամասնեցման, հետևաբար և դրանք ըստ իրենց մանրամասնեցման աստիճանով տեսակավորման պատկերը: Դրա յուրաքանչյուր մակարդակում գործառնությունների համալիրը կներկայացնի որոշակի մանրամասնեցման աստիճան ունեցող գործառնությունների ցանկը: Հետևաբար այն կարելի է դիտել որպես կառավարման գործառնությունների ցանկերը *ընդհանրական և մանրամասնեցված* տեսակների տրոհման՝ վերը առաջարկված մոտեցման ընդլայնված և ընդհանրացված տարբերակ: Այն հնարավորություն է ընձեռում ստանալ ցանկացած աստիճանի մանրամասնեցման գործառնությունների ցանկեր: Դրանց բազմությունը բաժանելով երկու մասի՝ գործառնությունների համակարգի հիերարխիկ պատկերում պայմանականորեն կարելի է առանձնացնել ընդհանրական և մանրամասնեցված ցանկերի ենթահիերարխիաները: Հենց դրանցից էլ, ելնելով պահանջներից և պայմաններից, կարելի է ընտրել կառավարման գործառնությունների վերը նշված ընդհանրական ցանկը՝ դրանում անհրաժեշտության դեպքում կատարելով համապատասխան փոփոխություններ:

Եթե կան դիտարկվող կոնկրետ գործունեության պայմաններին համապատասխանող մանրամասնեցված ցանկեր, ապա դրանցից կընտրվի պահանջվող տարբերակը: Եթե այդպիսիք չեն, ապա ընտրելով պահանջներին համակարգում չկան կամ համապատասխանությունը ամբողջական չէ, ապա ընտրելով պահանջներին առավել մոտիկ ցանկը՝ կարելի է դրանում ուղղումներ և լրացումներ կատարել՝ նկատի ունենալով ընդհանրական ցանկի գործառնությունների ձևակերպումներն ու տվյալ գործունեության առանձնահատկություններից բխող պահանջները:

Այսպիսի մոտեցումը գործնականում կիրառելու խնդիրը պայմանավորված է կառավարման գործառնությունների՝ տվյալ ժամանակի պահանջներին համապատասխանող նշված համակարգի գոյությամբ: Այն իր ամբողջական տեսքով, թեկուզ որևէ երկրի կամ տարածաշրջանի ընդգրկումով՝ ներառած գործունեության հիմնական ուղղություններն ու ոլորտները և տրոհումը հասցնելով կոնկրետության պահանջը բավարարող մանրամասնեցման, ինչպես մեզ հայտնի է, դեռևս ձևավորված չէ: Նկատի ունենալով կառավարման որակի բարձրացման անհրաժեշտությունը, դրանում կառավարման գործառնությունների կազմի ու բովանդակության պարզորոշման կարևորությունը և այդ նպատակով նշված համակարգի ձևավորման օգտակարությունը, կարծում ենք, ՀՀ պայմանների համար այդպիսի համակարգի ձևավորումն անհրաժեշտություն է, դրան ուղղված գիտագործնական աշխատանքների կատարումը արդյունավետ գործունեություն պետք է համարվի և արժանանա կառավարման բարձր մարմինների համապատասխան ուշադրությանը: Իսկ մինչ այդպիսի համակարգի ստեղծումն ու գործնական կիրառության պայմանների ապահովումը, կարծում ենք, նպատակահարմար կլինի օգտվել կառավարման գործառնությունների ընդհանրական և մանրամասնեցված ցանկեր կազմելու՝ վերը արված առաջարկությունից ձևավորել համերկային մեկ ընդհանրական կամ առանձին ոլորտային ընդհանուր ցանկեր և դրանց հիման վրա յուրաքանչյուր գործունեության կամ դրանց խմբերի համար՝ ըստ անհրաժեշտության, ձևավորել կառավարման մանրամասնեցված գործառնությունների ցուցակներ՝ հանձնարարելով դրանք գործնական կիրառման նորմատիվ փաստաթղթերի տեսքով: Այս աշխատանքները նպատակահարմար է իրականացնել գիտահետազոտական մասնագիտացված կազմակերպությունների կողմից կառավարման համապատասխան մարմինների հանձնարարությամբ և հսկողությամբ:

3. Կառավարման համակարգը կարելի է կառուցվածքավորել և գործառնություններն ու դրանց իրականացման մեխանիզմները կարող են կոնկրետացվել ըստ տարբեր բնութագրերի, այդ թվում նաև՝ ըստ կառավարվող ոլորտների խմբերի: Կախված յուրաքանչյուր խմբում ներառվող ոլորտների թվից և դրանցում գործունեության տեսակների միջև տարբերություններից՝ կարելի է տարբերակել ոլորտային կառուցվածքավորման խոշորացված և մանրամասնեցված տեսակներ: Այս տեսանկյունից մոտենալով կառավարման գործառնությունների վերը նշված ընդհանրական ցանկի ձևավորման խնդրին՝ հարկ կլինի դրանում ներառվող ագրեգատ (խոշորացված) գործառնությունները որոշակիորեն կոնկրետացնել իրենց էությամբ և կազմակերպական ձևերով, հետևաբար և գործառնությունների անվանումների ձևակերպումներով խիստ տարբերվող ոլորտների համար: Մեր կարծիքով, այդպիսիք են *հանրային և գործարարության* կառավարման ոլորտները:

Առաջինը (հանրային) մեր գրականությունում առավելապես անվանում են պետական կառավարում, ինչը լայնորեն էր օգտագործվում մախկին ԽՍՀՄ տնտեսագիտական հետազոտություններում և պաշտոնական փաստաթղթերում: Սակայն մինչ այժմ միանշանակ սահմանված չէ, թե պետությունը, որն ըստ այս անվանումի՝ փաստորեն հանդիսանում է կառավարման սուբյեկտ, ինչպես կամ ինչ կարգավիճակով է հանդես գալիս այդ դեպքում: Որպես կառավարման պատասխանատու մարմին՝ իր պետական ողջ ապարատով

և կառավարության՝ թե՛ իր բնակչությանը, որին ՀՀ Սահմանադրությամբ պատկանում է իշխանությունը երկրում: Կարծում ենք՝ այժմ օգտագործվող «պետական կառավարում» տերմին-հասկացությունը արտահայտում է տվյալ պետականության (մեր դեպքում՝ Հայաստանի Հանրապետության) տարածքում պետական մարմինների կողմից հասարակության կյանքի ու գործունեության տարբեր բնագավառների կանոնակարգման ուղղված կառավարչական գործունեությունը:

Արևմտյան երկրներից շատերում կառավարման այս ոլորտն իր ամբողջության մեջ անվանվում է *հանրային կառավարում* (public administration): Այն կարող է ընկալվել երկու ձևով՝ որպես *հանրության կողմից իրականացվող կառավարում* կամ *հանրության կառավարում* պետական պատասխանատու մարմինների կողմից: Առավել օգտագործվող վերջինն է, սակայն դրանում որոշված չէ կառավարող մարմինների կազմը:

Կառավարման մյուս խոշոր ենթախումբը տարբեր ուղղվածության և մասշտաբներ ունեցող արտադրություններ կամ միացյալ գործարարության կառավարումն է: Դրա համար, կարծում ենք, նպատակահարմար է օգտագործել արևմտյան երկրներում տարածված և այժմ նաև մեր երկրում կիրառություն ստացող բիզնես կառավարում (business administration) կամ մենեջմենթ անվանումը:

Անվանումների այսպիսի օգտագործումը, կարծում ենք, կօգնի պարզորոշել նաև այն հարցի պատասխանը, թե նույնակա՞ն են արդյոք կառավարում և մենեջմենթ տերմինների բովանդակությունները, թե՞ դրանք լիարժեք հոմանիշներ չեն: Կարծում ենք՝ նպատակահարմար է հայերենում այս անվանումները առանձնացնել, *պետական կառավարում* տերմինի փոխարեն (այժմ դրան վերագրվող այն բովանդակությամբ օգտագործելու դեպքում, որը նշեցինք վերը) կամ թեկուզ և դրա հետ զուգահեռ օգտագործել *հանրային կառավարում* տերմինը՝ տալով դրա միանշանակ բացատրությունն ու սահմանումը: Կառավարչական գործունեության երկրորդ խոշոր խումբը նույն դատողություններով, հաշվի առնելով նաև արդեն լայն տարածում ունենալու իրողությունը, նպատակահարմար է անվանել *գործարար կառավարում* կամ օգտագործել դրա անգլերեն տարբերակը՝ *բիզնես մենեջմենթ* (հակիրճ՝ մենեջմենթ):

Շարադրվածից հետևում է, որ կառավարման գործառույթների ընդհանրական ցանկեր նպատակահարմար է ձևավորել նշված երկու ուղղությունների՝ հանրային և գործարարական կառավարման ոլորտների համար առանձին-առանձին, որպեսզի դրանք իսկապես հիմք դառնան այդ ոլորտի կոնկրետ գործունեությունների կառավարման գործառույթների մանրամասնեցված ցանկեր կազմելու համար:

4. Գործառույթների կազմը ընտրվելու է կառավարման համակարգի տրամաբանական ինստիտուցիոնալ կառուցվածքավորման ճանապարհով՝ գործառույթներն առանձնացնելով ըստ դրանց ամբողջական լինելու, այլ գործառույթների հետ հատվածք կամ կրկնողություն չունենալու, առանձնացված դիտարկելի կամ վերլուծելու հնարավորություն ընձեռող լինելու, իրենց բովանդակությամբ որպես երևույթ ընկալվելու, այսինքն՝ ինստիտուտ հասկացությանը համապատասխանելու և գործառությանին միավոր հանդիսանալու բնութագրերով: Իհարկե, հաշվի է առնվելու նաև դրանցից յուրաքանչյուրի՝ այդպիսի այլ միավորների հետ ունեցած կապերի առկայությունն ու դրանց սերտության աստիճանը, որպեսզի խուսափել կրկնություններից:

Ինստիտուցիոնալ մոտեցման ընտրությունն այստեղ հիմնավորվում է նրանով, որ այն առավել չափով է համապատասխանում ցանկացած երևույթի կամ հասկացության էության և կառուցվածքի մասին ճիշտ պատկերացումներ ստանալու պահանջին: Այն հաշվի չի առնում տեղական կամ տարբեր այլ պայմանների ազդեցությունների պատճառով տվյալ երևույթի այս կամ այլ բաղկացուցիչ տարրը (մեր դեպքում՝ կառավարական գործառույթների կատարումը) կազմակերպչական կառուցվածքի այլ միավորների մեջ ներառելու հանգամանքը: Ինստիտուցիոնալ կառուցվածքը հիմք կարող է հանդիսանալ կազմակերպչական կառուցվածք ձևավորելու և հիմնավորելու համար: Այս տեսանկյունից ցանկում չի կոնկրետացվելու, թե գործառույթները կառավարող մարմնի կառուցվածքային որ միավորների կամ ստորաբաժանումների կողմից են իրականացվելու: Ավելին, անհրաժեշտ չպետք է համարվի, որպեսզի այդ մարմինը անպայմանորեն արդեն ձևավորված, իսկ կառավարվող գործունեությունն արդեն սկսված լինեն: Խոսքը վերաբերում է նախատեսվող կոնկրետ օբյեկտի ձևավորման և բնականոն գործունեության կառավարման գործառույթների ցանկի պարզորոշմանը, իսկ թե ում կողմից է դա կատարվելու կամ երբ է այդ գործունեությունը իրականություն դառնալու, չպետք է ազդի ձևավորվող ցանկի կազմի վրա:

5. Կառավարումը՝ որպես համընդհանուր գործունեություն, ինչպես նշել ենք, կիրառվելու է ցանկացած գործունեության նկատմամբ: Չնայած մեծամասնության կողմից այն ընկալվում է որպես կառավարվող գործունեության բաղադրիչ մաս, կարծում ենք, ճիշտ կլինի դրանք դիտարկել իրենց կապի և նույն նպատակային ուղղվածության մեջ, սակայն որպես առանձին գործունեություն՝ իրենց առանձնահատկությունների հաշվառումով: Այս մոտեցումը առաջադրում է մի ուրիշ, կարծում ենք, հետաքրքիր, կարևոր, սակայն դեռևս ոչ բավարար հետազոտված խնդիր: Եթե կառավարումը տվյալ (կառավարվող) գործունեությանը ծառայող, սակայն ըստ էության այլ, կարելի է ասել՝ անկախ, գործունեություն է, ընդհանրական է, կիրառվելու է ցանկացած գործունեության համար, ապա բնական է ենթադրել, որ կարելի է առանձնացնել նաև *կառավարման գործունեության կառավարումը*, ներմուծել այդ հասկացությունը մանավանդ բոլոր այն դեպքերում, երբ կառավարվող գործունեության էությունը հենց կառավարումն է, ինչը առկա է հանրային կառավարման պարագայում:

Կառավարման տեսությունում այսպիսի տարանջատում չի կատարվում: Մարդկային կապիտալի տեսության հետ առաջացավ այն ռացիոնալ օգտագործելու խնդիր, որի համատեքստում հարկ եղավ դնել և մշակել նաև, այսպես կոչված, «աշխատակազմի կառավարման» խնդիրները: Սակայն սա կարող է դառնալ առաջարկվող կառավարման գործունեության կառավարում հասկացության միայն մի բաղադրիչ մասը, բայց ոչ դրա հոմանիշը կամ ներառել բոլոր հարցերը:

Նկատի ունենալով խնդրի անբավարար մշակվածությունը և դրանում շատ վիճարկելի հարցերի առկայությունը, ձևավորվող ցանկերում կառավարման այդ երկու տեսակների գործառույթները, կարծում ենք,

առայում դեռ կարելի է դիտարկել համատեղ՝ որպես նույն գործունեության կառավարման տարբեր ուղղվածությամբ գործառնություններ: Այս ընդունելությունը մասամբ արդարացվում է նրանով, որ հանրային կառավարման հիերարխիայի մակարդակներում կառավարման գործառնությունները, չնայած իրենց խիստ տարբեր մասշտաբներին, հիմնականում նույն ուղղվածությունն ու կազմը ունեն: Սակայն մշեմը մաս, որ եթե այս դրույթը գործառնությունների ցանկի կազմի վրա էական ազդեցություն չի կարող ունենալ, այն չի կարելի ընդունելի համարել գործառնությունների իրականացման միջոցառումների մշակման և մանավանդ դրանց կիրառման գործընթացներում: Վերջինները, ինչպես մաս կառավարման կազմակերպչական կառուցվածքի նախագծման, կառավարող մարմնի ձևավորման, գործունեության համար տարատեսակ պայմանների և ապահովումների ստեղծման աշխատանքներն իրենց էությանը հանդիսանում են նախապատրաստական և վերագրվելու են նախատեսվող կառավարչական գործունեությունը կառավարելու գործընթացներին:

6. Կառավարման գործառնությունները կատարվում և գործնական արդյունք են ապահովում իրենց բովանդակությամբ համապատասխանող տեխնոլոգիաների կիրառմամբ: Դրանք ոչ միշտ են մշակվում և կիրառելի տեսք ստանում գործունեությունը կառավարող սուբյեկտների կողմից, սակայն դրանց գոյությունն անհրաժեշտ է կառավարումն իրականացնելու համար: Հետևաբար տեխնոլոգիական ապահովումը, ում կողմից էլ որ այն իրականացվի, ինստիտուցիոնալ տեսանկյունից կառավարչական գործառնությամբ է: Ուստի այն ներառվելու է կառավարման գործառնությունների կազմում՝ որպես տեխնոլոգիական զարգացման գործունեություն, սակայն չկոնկրետացնելով դրանց իրականացման մանրամասները նույնիսկ խոշորացված (ազդեցատ) գործառնությունների համար: Այսպիսի կոնկրետացումը հնարավոր է միայն մանրամասնեցված գործառնությունների համար, այն էլ միայն որպես դրանց կատարման մեթոդական ցուցումներ:

Տեխնոլոգիաները այժմյան գիտելիքահենք գործունեության ինտենսիվ զարգացման շրջանում, նույնիսկ գործառնությունների համեմատաբար անփոփոխ մնալու պայմաններում զարգանում և փոփոխվում են կամ փոխարինվում են ավելի արդյունավետ և արտադրողական նոր տարրերակներով: Դա, մի կողմից, տեխնոլոգիաների նկարագրության ներառումը կառավարման գործառնությունների ընդգրկում ցանկում դարձնում է գործնականորեն աննպատակահարմար: Սակայն, մյուս կողմից, մշված զարգացումը և կառավարման բարձր արդյունավետությունն ապահովելու պահանջը կարևորում են կիրառվող տեխնոլոգիաների պարբերական վերանայումը և հնարավոր բարելավումը, իսկ անհրաժեշտության դեպքերում՝ մաս պահանջներին համապատասխան նոր տեխնոլոգիաների մշակումն ու կիրառումը: Ուստի այդ գործընթացները կամ դրանց կառավարումը պետք է ներառվեն գործառնությունների կազմում:

Գործառնությունների իրականացման ժամանակ օգտագործվում են գործունեության առանձնահատկություններին և ժամանակի պահանջներին համահունչ պարագիզներ և սկզբունքներ, որոնք այդ առումով դառնում են տեխնոլոգիաների տարրեր, ուստի դրանց ընտրությունը, տվյալ գործունեության պահանջներին համապատասխանեցումը կամ նոր ձևակերպումների ստացումը ևս պետք է ներառվեն կառավարման գործառնությունների կազմում:

7. Գիտելիքահենք կառավարումը ենթադրում է գիտելիքի առկայություն և օգտագործում, ուստի կառավարման գործառնություններում կարևորվում է այդ գիտելիքային հիմքի ձևավորումը՝ որպես գիտելիքի պաշար և վերջինիս ընդլայնում ու զարգացում գործունեության պահանջների ու պայմանների փոփոխման հետ: Ենթադրվում է, որ այդ գործընթացներում հնարավոր ակտիվ մասնակցություն պետք է ունենա մաս կառավարման անձնակազմը: Այս գործողությունների կատարումը ենթադրում է կառավարման պարտականություններում նախատեսել գործունեության և դրա կառավարման այս տիպի գործընթացներում այլոց փորձի բացահայտումը և ծանոթացումը, գիտական հետազոտությունների և նորարարության, ինչպես մաս նորամուծությունների կառավարումը նույնպես ներառել գիտելիքային հենքի ձևավորման գործընթացների կազմում: Անհրաժեշտ է դառնում ապահովել առկա գիտելիքային հենքի մասին բավարար պատկերացումներ հնարավոր օգտագործողների մոտ՝ դրանց կիրառության համար: Դա իր հերթին պայմանավորում է համապատասխան գործառնությունների կատարում կառավարող մարմնում:

Գիտելիքի կարևոր բաղադրիչ է գործունեության և դրա կառավարման գործողությունների կատարման համար անհրաժեշտ տեղեկատվության առկայությունը: Դրա տեսականու որոշակիացումը, աղբյուրների բացահայտումը, ձեռքբերման ուղիների մշակումը և օգտագործումը, գործունեությունն ու դրա կառավարումը պահանջվող տեղեկատվությամբ ապահովելը պետք է համարվեն կառավարման կարևոր գործառնություններ:

8. Գիտելիքը որոշակի կոնկրետացման դեպքում մեծամասամբ կարող է կիրառվել գործունեության տարբեր ոլորտներում, հիմք հանդիսանալ տարբեր գործողությունների իրականացման համար: Դրանց թվում կարող են լինել մաս այնպիսիք, որոնք մտածված կամ չգիտակցված ձևով բացասական ազդեցություններ կունենան տվյալ գործունեության կամ հասարակության այլ սուբյեկտների կամ նրանց գործունեության արդյունքների վրա: Այս առումով առկա կամ մշակվող գիտելիքահենքությունը և դրա օգտագործման հնարավոր մոտեցումները մասնագիտական բազմակողմ փորձաքննություն պետք է անցնեն: Դա առավել ևս կարևոր է հանրային կառավարման բարձր մակարդակներում, քանի որ կիրառման լայն դաշտը մեծացնում է մաս այդպիսի օգտագործման հնարավորությունը: Ըստ ամենայնի պետք է հավաստի լինի *գիտելիքային անվտանգությունը*, տվյալ գիտելիքը հասարակության շահերին վնասող գործողություններում կիրառելու հնարավորության բացառումը: Այս գործառնությունները ևս պետք է կառավարող մարմինը կատարի:

Գիտելիքային անվտանգության տեսանկյունից փորձաքննության հետ մեկտեղ գործունեության նախագծային կամ նախապատրաստական փուլում կառավարման գործառնություններում անհրաժեշտ է նկատի ունենալ մաս *գիտելիքային ռիսկի* հնարավորությունը: Այն գիտելիքի պարագայում, նկատի ունենալով գիտելիքատեղծ գործունեության արդյունքների ստացման զգալի անորոշությունը, զգալի կարող է լինել:

Պետք է բացահայտել այդ ռիսկի տեսակները, գնահատել այն և ձեռնարկել դրա կառավարման համապատասխան միջոցառումներ, որոնք, կարծում ենք, կառավարման գործառնությունների կազմում պետք է մախատեալեն:

9. Գիտելիք կրողը, զարգացնողը, կիրառողը, արդյունքները գնահատողը մարդն է, յուրաքանչյուր գործունեությունում ընդգրկված կադրային կապիտալը: Նրա որակային, այսինքն՝ մաս գիտելիքային մակարդակից և այն օգտագործելու կարողությունից ու ցանկությունից մեծապես կախված են գործունեության կառավարման արդյունքներն ու արդյունավետությունը: Ուստի կառավարող անձնակազմի ընտրությունը, ըստ կարողությունների նրանց օգտագործումը, աշխատանքի արդյունքների և որակային առաջընթացի գնահատումը, որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումների մախաձեռնումն ու իրականացումը, պարբերական (օրենքով մախատեալած) առեստացիան և համապատասխան աստիճանաշնորհումը, աշխատանքի մոտիվացիայի կառավարումը և այլ առնչվող գործողությունների պլանային կատարումը անհրաժեշտաբար մախատեալելու են որպես անձնակազմի կառավարման կարևոր գործառնություններ:

10. Ինտենսիվ փոփոխությունների այժմյան ժամանակշրջանում գիտելիքահենքությունը ենթադրում է կառավարվող գործունեության բազմակողմ ճանաչում և այդ հիմքի վրա կառավարման գործառնությունների իրականացում, ընդ որում, նկատի ունենալով հնարավոր բոլոր փոփոխությունները իրենց դիմամիկայում: Անհրաժեշտ է դառնում գիտենալ և նկատի ունենալ ոչ միայն գործունեության նկատմամբ պահանջների և փաստացի պայմանների բնականոն փոփոխությունները, այլև կառավարման գործողությունների ազդեցությամբ տվյալ գործունեությունում տեղի ունեցող նպատակային կամ անցանկալի երևույթներն ու փոփոխությունները: Դրանք բացահայտելու համար անհրաժեշտ է իրականացնել գործունեության և դրա բնութագրերի, այդ թվում՝ անպայման արդյունավետության, պարբերական մոնիտորինգ, շարժի գնահատում, պատճառների բացահայտում, ապա և այդ հիմքի վրա գնահատել մաս իրականացված կառավարումն իր ամբողջության մեջ: Այս գործողությունների կատարումը, մաս դրանց արդյունքների հիման վրա տվյալ գործունեությունում և դրա կառավարման գործընթացներում կոնտրոլինգի իրականացման միջոցառումների մշակումն ու ներդրումը ժամանակի գործոնի հաշվառումով և համապատասխան հիմնավորումներով, համոզված ենք, կառավարող մարմնի կարևորագույն գործառնություններից են: Դրանք ուղղված են ինչպես հիմնական գործունեության, այնպես և դրա կառավարման արդյունավետության բարձրացմանը: Այս արդյունքների, հետևապես և դրանք ստանալուն ուղղված գործողությունների կարևորությունն ու օգտակարությունը համոզում են, որ դրանց իրականացման նպատակաուղղված գործողությունները կառավարման գործառնությունների կազմ ներառելու անհրաժեշտությունը գիտելիքի տնտեսությունում պետք է, որ կասկածներ չհարուցեն: Առավել ևս, որ կոնտրոլինգը արևմուտքի՝ տնտեսապես բարձր զարգացած երկրներում դեռ մախտրղ դարի վերջերին արդեն լայն կիրառություն ուներ, իսկ մեր երկրում դրա կիրառությունը դեռ ևս համարյա սաղմնային վիճակում է:

11. Կառավարումն իր էությանը գործունեության բնական մեմաշնորհային ոլորտ է, որում մրցակցության հնարավորությունները բավականին սահմանափակ են, ինչը հակասում է ազատականացված տնտեսության հիմնական սկզբունքին: Անհրաժեշտ են եթե ոչ ազատ մրցակցության, ապա գոնե ժողովրդավարության որոշակի տարրերի հնարավոր ընդլայնում տնտեսության ցանկացած մակարդակում իրականացվող կառավարման գործընթացներում: Դրանք կարող են տարաբնույթ լինել, ինչպես օրինակ, գործունեության և դրա կառավարման անձնակազմերի մասնակցությունը կամ ներկայացուցչությունը կառավարչական որոշումների մշակման, քննարկման և ընդունման գործընթացներում, առնչվող կամ հասարակական կազմակերպությունների և արհմիությունների ակտիվ գործունեությունը, վերադաս մակարդակի կառավարող մարմինների կողմից վերահսկողական ստուգումները, գործունեության նորմատիվային կանոնակարգումը, զանգվածային տեղեկատվության միջոցների կողմից բացահայտումներն ու իրավիճակի անսրող գնահատումը և այլն: Այսպիսի միջոցառումների ցանկը և իրականացման եղանակները, կարծում ենք, նպատակահարմար կլինի սահմանել վերադաս մակարդակում կառավարման պատասխանատու մարմինների կողմից, ներառել գործունեության սուբյեկտ հանդիսացող կազմակերպության կանոնակարգում, իրականացման հսկողությունը վստահել վերադասին կամ ոլորտային և մասնագիտական վերահսկող կազմակերպություններին: Ժողովրդավարությունը կառավարման գործընթացներում, մանավանդ դրանում այն սուբյեկտների մասնակցության ապահովման, ում հիմնականում վերաբերում են ընդունվող կառավարչական որոշումները և իրականացվող միջոցառումները, վերահսկողությունն ու վարչական պատասխանատվությունը թույլ տված սխալների ու բացթողումների համար արդարացի և որակյալ կառավարման պահանջներ են, ուստի դրանք պետք է ներառվեն մաս կառավարող մարմնի գործառնություններում, սակայն միայն այնքանով, որքանով դա իրենց պարտականությունն է, որպեսզի կանխվեն չարաշահումների հնարավորությունը: Իսկ դրանց իրականացման մնացած տարրերը թողնվելու է վերադաս կառավարող մարմիններին և հասարակությանը, որին իրականում պատկանում է իշխանությունը:

12. Ակնհայտ է, որ նշված գործառնությունները հիմնականում կամ մեծ մասով վերաբերում են տվյալ գործունեությունը կառավարող մարմնի կամ ստորաբաժանման, այլ կերպ ասած՝ դրա անձնակազմի կառավարմանը: Իսկ այդ մարմնի անմիջական գործառնությունները հիմնական գործունեության կազմակերպման և իրականացման, արդյունքների իրացման և գործունեության անընդհատությունը ապահովելուն ուղղված գործառնություններն են, ինչպես օրինակ, ֆինանսական, տեխնիկական, կազմակերպչական, վերարտադրական, մատակարարման, ռեսուրսների օգտագործման, որակի ապահովման և այլն: Ինքնըստինքյան հասկանալի է, որ դրանք ներառվելու են կառավարման հիմնական գործառնությունների կազմում: Գիտելիքահենքության պահանջը լիովին վերաբերում է մաս դրանց իրականացմանը ինչպես մախապատրաստական և իրականացման փուլերին, այնպես և գործունեության անընդհատությունը ապահովելու և արդյունավետությունը բարձրացնելու խնդիրների բարձրորակ լուծմանը: Այս գործառնությունների ձևակերպման ժամանակ ևս օգտակար կլինի նկատի ունենալ վերը թվարկած դրություններում նշված հիմնական պահանջները:

Եզրափակելով ցանկանում ենք մի անգամ ևս նշել կառավարման, ուստի և դրա գործառնությունների գիտելիքահենք լինելու, միանշանակ և ընկալելի ձևակերպման, կատարողների կողմից գիտակցված իրականացվելու և արդյունքների ու հետևանքների համար պատասխանատվություն կրելու, պարբերաբար վերանայվելու և բարելավվելու մեծ կարևորությունը կառավարվող գործունեության՝ բարձր աղյուսավետություն ապահովելու գործում: Ուստի կառավարման այս կողմին պետք է դրանց կարևորությանը համարժեք ուշադրություն դարձվի ինչպես տվյալ գործունեության ղեկավարության, այնպես և վերադաս, այդ թվում՝ մակրոմակարդակային կառավարման մարմինների կողմից, ինչը, կարծում ենք, գիտելիքահենք տնտեսությանը և կառավարմանը անցնելու կարևոր պայմաններից մեկն է լինելու մեր երկրում:

ԲԵՆԻԱՄԻՆ ԵՂԻԱՋԱՐՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի բնմատիկ խմբի ղեկավար, տ.գ.դ. պրոֆեսոր*

ԻՆՊԱՆԱՍԻՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի առաջատար գիտաշխատող, տ.գ.բ.*

ՀՀ-ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՄՈՂԵԼԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՇՈՒՐՋ

XXI դարում ձևավորվող նոր հետինդուստրիալ աշխարհայացքին բնորոշ է գիտելիքի, տեղեկատվության, գիտության, մշակութային կապիտալի գերակայությունը ընդհանուր տնտեսական կապիտալի կազմում, ինչը համապատասխանաբար կարևորում է նաև սոցիալական համամարդկային արժեքները: Ստեղծված սոցիալ-մշակութային պայմաններում փոխվում են հանրությունների կենսագործունեության իրացման տեխնոլոգիաները, կազմակերպման և կարգավորման, ճանաչման և հաղորդակցման սկզբունքները:

Կուլտուրան կարևոր դեր ունի մարդկության կենսագործունեության բոլոր ոլորտներում հասարակության բոլոր խավերի համար: Այն, համարվելով մարդկային փորձի կուտակման, պահպանման և փոխանցման միջոց, որոշակի ձևով արտահայտվում է նաև կազմակերպությունների գործունեությունում:

Ընդունելով արդի ժամանակաշրջանում կուլտուրայի ազդեցության կարևորությունը: Լայնորեն ուսումնաիրվել է նաև դրա կառավարման բնագավառում, առաջադրվել են կուլտուրայի և կորպորատիվիզմի համագործակցության խնդիրներ:

Եթե կորպորատիվիզմը շահերի հիման վրա կազմակերպված խմբերի համագործակցության գործառնության մեխանիզմ է, որն ապահովում է ժողովրդավարական համաձայնեցվածություն և կոլեկտիվ պատասխանատվություն՝ ընդունված պայմանագրերի իրացման համար, ապա գիտագործնական հետազոտությունների առարկա է դառնում շուկայական հարաբերությունների «կուլտուրացման» անհրաժեշտությունը, որի հնարավորությունների օգտագործումը կնպաստի աշխատանքի արտադրողականության, շահույթի, արտադրվող բարիքների ծավալի և, ընդհանրապես, կյանքի որակի բարձրացմանը, կոլեկտիվի անդամների համախմբմանը, սոցիալական լարվածության թուլացմանը և անվստահության հարթեցմանը: Այսպիսով, սոցիալական համագործակցության արժեքները հիմք են դառնում տնտեսական կուլտուրայի նոր ձևի՝ կորպորատիվ կուլտուրայի առաջացման համար, որի մեկնաբանումը հնարավոր է իր բնական-սոցիալական տարածքում և ժամանակահատվածում: Կորպորատիվ կուլտուրայի ծագման և զարգացման այդպիսի սոցիալ-կուլտուրական միջավայրը կարող է լինել՝ հետինդուստրիալ հասարակությունը, որի կողմնորոշիչներն են անձի իրավունքը, ազատությունը, համամարդկային արժեքները, կյանքի որակը:

Այսօր տնտեսական վերափոխումների հաջողությունը մեծապես կախված է դրա կուլտուրական ներուժից, անձի սոցիալապես կարևոր ստեղծագործական հատկանիշների ձևավորման աստիճանից, դրանց գործնական օգտագործումից: Մեր ժամանակներում՝ բազմազգ կոլեկտիվների և գլոբալիզացիայի պայմաններում, կուլտուրան դառնում է համամարդկային հիմնախնդիր: Սակայն ի հայտ է գալիս կուլտուրայի կարևոր հատկություններից մեկը՝ երկփեղկվածությունը՝ կուլտուրայի բարձր սոցիալական կարևորության և նրա իրական մակարդակի միջև:

Կորպորատիվ կուլտուրան մեծ դեր է խաղում կազմակերպության կյանքում, և այդ պատճառով այն պետք է լինի լուրջ ուսումնասիրության առարկա: Սակայն մեզանում կորպորատիվ կուլտուրայի վերաբերյալ հետազոտությունները սակավ են, կառավարման գիտության ոչ բոլոր հեղինակներն են այդ հարցին առանձին ուշադրություն հատկացրել: Այնուամենայնիվ, նկարագրելով կառավարման բոլոր տարրերը և գործընթացները, նրանք պարտադիր նշել են կուլտուրայի գործնի ազդեցության կարևորությունը: Կորպորատիվ կուլտուրան սկսում է գործել կազմակերպության հիմնադրման օրից, երբ այն համապատասխանեցնում են սոցիալական պատասխանատվության պահանջներին, երբ ձևավորվում է նրա առաքելությունը, մշակվում են ռազմավարությունները և ընդունվում կառավարման կառուցվածքը:

Կորպորատիվ կուլտուրայի առավել ամբողջական սահմանումը տվել է Վ.Սպիվակը: Ըստ նրա. «Կորպորատիվ կուլտուրան տվյալ կորպորացիային բնորոշ նյութական և հոգևոր արժեքների, դրանց դրսևորման և համագործակցության համակարգ է, որն արտացոլում է նրա անհատականությունը, ընկալումը ներքին և արտաքին սոցիալական և տնտեսական միջավայրերում, արտահայտվում է վարքագծի, փոխազդե-